# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՈՐԳԻ ՊՈԼՏԱՎՉԵՆԿՈՅԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԳԵՈՐԳԻ ՊՈԼՏԱՒՉԵՆԿՕ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Համայն հայութեան նուիրական Սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ՝ աստուածապաշտ ռուս ժողովրդի հաւատաւոր եւ Քրիստոսասէր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրը եւ ամենաջերմ բարեմաղթանքները:

Հայրապետիս համար մշտապէս գոհունակութեան առիթ է անդրադառնալու երկնահաճոյ երախտաւոր անձանց նուիրեալ գործունէութեանը, ովքեր բարուն ծառայելու պատրաստակամութեամբ ընտրել են մարդկային հասարակութեանը, ինչպես նաեւ համընդհանուր եկեղեցական կեանքին պայծառութիւն յաւելելու աստուածահաճոյ ճանապարհը:

Մեծարգոյ Տիար Գեորգի Պոլտաւչենկո,

Մենք քաջածանօթ ենք Ձեր բարեպաշտ եւ աստուածասէր կեանքի ընթացքին, Ձեր ազնիւ ու ծառայասէր ոգուն: Ուրախ ենք հաստատելու, որ Ռուսաստանի Դաշնութեան Կենտրոնական մարզում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչի Ձեր բարձր եւ պատասխանատու պարտականութիւնից բացի՝ մեծ հաւատքով եւ գովարժան աջակցութեամբ մշտապէս սատար էք լինում Քրիստոսի Սուրբ Եկեղեցու աստուածադիր առաքելութեանը՝ մեծապէս նպաստելով քրիստոնեական հոգեւոր արժէքների պահպանութեան ու ստեղծման եւ հաւատքի տարածման նուիրական գործին:

Ձեր որդիական սէրն ու խորին յարգանքը նաեւ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Դուք արտայայտեցիք սիրազեղ ոգով ստանձնած յանձնառութիւններով, որով անգնահատելի աջակցութիւն ցոյց տուեցիք մեր Եկեղեցու միասնութեան ամրապնդմանը: Բազմաթիւ Ձեր վաստակով Դուք արժանիօրէն վայելում էք սէրն ու յարգանքը յատկապէս Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի հոգեւոր ողջ դասի եւ հաւատաւոր հայորդեաց: Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Տիրախնամ թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք նաեւ Ձեր կողմից կազմակերպուող մարդասիրական եւ բարեգործական բազում ծրագրերի իրականացման աշխատանքներին, որոնց իրագործումով վարձ էք ամբարում Երկնից Արքայութեան մէջ:

Ուրախութիւն էր Մեզ համար Սուրբ Էջմիածին Ձեր այցելութեան ընթացքին ողջունելու Ձեզ Մայր Աթոռում՝ վերստին զգալով քրիստոնէական սրբութիւնների նկատմամբ Ձեր եր-

կիւղած ազնիւ պարկառանքը: Մեր երկրի եւ ժողովրդի հանդէպ Ձեր սիրով ու բարի վերաբերմունքով Դուք ընդգծում էք դարաւոր բարեկամութիւնը հայ եւ ռուս հաւատակից ժողովուրդների միջեւ՝ երկնահաճոյ գործերով ուղղակիօրէն նպաստելով մեր երկու ժողովուրդների, երկու պետութիւնների եւ Եկեղեցիների միջեւ սերտ կապերի եւ բարեկամութեան զօրացմանը:

Մեծարգոյ Տիար Գէորգի Պոլտաւչենկօ, Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ առաքինի գործոց յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի ու պահպանի Ռուսիոյ օրհնեալ երկիրը եւ իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի բարեպաշտ զաւակներին հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Մայիսի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 244